



THE
DICKRIS PUBLISHING CO.
628 Third Avenue,
NEW YORK CITY.



ՏԻՎԻՏ ՍԻՆՆԱԿԵՐԸ ԲԱՑ
ԵՆ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ԱՌՋԵՒ :

ՏԱԲԱԹԱԹԵՐԹ
Ա Ձ Գ Ա Յ Ի Ն , Գ Ի Ր Ա Կ Ա Ն Ե Ի Գ Ա Ղ Ա Գ Ա Կ Ա Ն

Ա. ՏԱՐԻ, ԹԻՒ 14

ՆԻՒ ԵՈՐԲ, ՓԵՏՐՎԱՐ 12, 1898

ԳԻՆ 3 ՍԷՆԹ

Ա Ձ Գ Ա Յ Ի Ն

ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
ՀԱՆԴԵՍԸ

Անցեալ կիրակի օր Բարեգործական ընկերութեան կողմէ կանխաւ ցրուած նորածն յայտարարութեան մը համաձայն «Եկեղեցական ընդհանուր ժողովն Հայոց» տեղի ունեցաւ 23րդ փողոցի Գալվարի եկեղեցւոյ մէջ, ի ներկայութեան 750ի շափ երկսեռ բազմութեան: Այս ժողովը «Կը բաղկանար Հայաստանեայց եկեղեցւոյ անդամներէն, Պատ. Եռհաննայի, Պատ. Յակոբեանի և Պատ. Խաչատրեանի եկեղեցիներէն», որոց նպատակն էր ոչ թէ նիկիոյ ժողովը ընդունելու, կամ նենսոր մը նշուելու գործերով զբաղել, այլ հանգանակութիւն մ'ընել յիշեալ ընկերութեան ի նպաստ:

Գեր. Տ. Վաղինակ վարդապետ Ս. Պատարագ մատոյց, և ըստ աւուր պատշաճի քարոզ մը խօսեցաւ, կոչում ընելով ժողովրդեան օժանդակիլ Բարեգործականին, որ կարող ըլլայ իւր նպատակն իրագործել— օգնել աղքատաց և գործ գտնել անգործներուն՝ առանձին գրասենեակ մը հաստատելով:

Յետ Ս. Պատարագի, եկեղեցւոյն երէցն Անգլիերէն պաշտամունք մը կատարեց, ըստ արարողութեան Անգլիական եկեղեցւոյ, կարճ աղօթք մուքանի մը քաջալերական խօսքեր ալ ընելով խուն բազմութեան: Թէև մասնաւոր խօսողներ ալ կային այդ օր, բայց ժամանակի անցկոթեան համար ընկերութեան ատենապետն Տ. Հայկունի լաւագոյն սեպեց գործի ձեռնարկել— հանգանակութեան սկսիլ: Ատենապետի հրահրին պատասխանող առաջին ազգայինն եղաւ Տ. Կիւլպէնկեան, որ քանի մը քաջալերական ընտիր խօսքեր ըրաւ, համեմելով զայն ըստ 100 տոլարի նյութով մը: Տ. Կիւլպէնկեան խօստացաւ նաեւ կրկնապատկել ու եռապատկել իր նուէրներն, եթէ Բարեգործական ընկերութիւնն ապագային իր նպատակին ծառայելու շարունակ մէջ գտնէ:

Ո՞վ կ'ըսէ թէ հրաշքներու դարն անցած է: Աստուած քարերէն կրնայ Արարհամուր գաւակներն յարուցանել: Երկրորդ նուիրատուն եղաւ Տ. Յ. Թալանճեան, որ քանի մը քաջալերական խօսքերով իր եւ իր Տիկնոջ կողմէն \$125 նուիրեց այս բարենպաստակէնարկին:

Ժողովուրդն հետեւելով առնց՝ մասնակցեցաւ հանգանակութեան, որոյ արդիւնքն եղաւ 800 տոլարի շափ: Նուիրատուաց թիւն 50ը հազիւ կըրցած էր հասնիլ, անանկ որ դեռ ժողովրդի ստուար մասը իր լուսման չէ ձգեր Բարեգործականի մեծ պնակին մէջ:

Ժողովը որ սկսած էր ժամը 3ին, պահպանիչով մը փակուեցաւ երեկոյեան վեցի ատեններն:

ՈՐԲԱՆԱՄ ՏԻՎԻՆՆԵՐ

Մեր մասնաւոր թղթակիցն հետեւեալն կը գրէ մեզ Որբայնամ Տիկնանց Ընկերութեան մասին:

Կանանց «Որբայնամ Ընկերութեան» ժողովն Փետրվար 10ին տեղի ունեցաւ Ս. Ոսկերբան եկեղեցւոյ սրահին մէջ՝ նախադաշուութեամբ Հ. Մաշթոց վարդապետի, և ընկերակցութեամբ Հ. Վաղինակ վարդապետ Սիսակեանի, ուր հաւաքուած էին 17 ժողովականներ: Ժողովը բաց արեց Հ. Մաշթոցը՝ մի խրատուական դերուոր ճառով, որի և կանանց այս նորակաղմ Ընկերութեան մասին մենք կը յայտնենք մեր կարծիքը առանձին յօդուածով. առ այժմ միայն կը յիշենք ընտրութեան մասին եղած մի քանի ձևականութիւնը, որ կատարուեցաւ շատ կանոնաւոր և համաձայն կանոնագրի, որը ընտրութիւններէն առաջ Հ. Սուրբ կարդաց ժողովականներին, միանգամայն յանձնելով նրանց քննադատութեան և ընդունելութեան, որը միաձայն ընդունուեցաւ. ապա ազդու կերպով խօսեց Հ. Վաղինակը: Յետոյ Օր. Բլաբուէլ ներկայացուցաւ ժողովականներին, Հ. Մաշթոցի կողմից, որ ընդունուեցաւ ծափահարութեամբ, և որ Անգլ. լեզուով մի կարճ բանախօսութեամբ խորախօսեց այս օգտակար ձեռնարկութիւնը: Ժողովականները կողմից Տիկին Ս. Վատեան շնորհակալութիւն յայտնեց Օր. Բլաբուէլին և երկու վարդապետներին, որից յետոյ անմիջապէս զբաղուեցան Ընկերութեան դիւանի անդամների ընտրութեամբ, որ գաղտնի քուէարկութեամբ ընտրուեցան հետեւեալները:

Ատեն. Տիկին Այվատեան, 16 քուէ. Ատենադպիր Օր. Սեղբոսեան 7 » . Գանձապետ Տիկ. Թալանճեան 12 » .

ԽՈՐՀՐԴՍՏՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ
Տիկին Տիոնեան, 6 քուէ.
Տիկին Քէլէկեան 5 » .

Օր. Բլաբուէլ խոստացաւ սարին 50 դոլար, Տիկին Թալանճեան էլ խոստացաւ 50 դոլար և Ընկերութեան Հայերէն կանոնագիրը տպագրել ալ իր ծախքով: Տիկին Քէլէկեան՝ \$ 25 գրոնեց, իսկ Տիկին Յովսէփեան նուիրեց մէկ ընտիր ձեռագործ. և Տիկին Շալճեան, բացի իր նուէրից, յանձն առեց Ընկերութեան Անգլիերէն կանոնագիրը տպագրելու ալ:

Ժողովը փակուեցաւ ժամը 5ին:

ՊՍԵՏՈՆԱԿԱՆ ԱՐՏԱՅԱՅՏՈՒԹԻՒՆ

Ուսիքը, 1 Փետրվար
«Երբայն» Յունվար 24ի թւոյն խմբագրականին մէջ քննադատուած էր Ս. Փրկիչ եկեղեցւոյ մէջ կատարուած հանգանակութեան «եղանակը»: Պատիւ ունինք ծանուցանել թէ այդ եղանակը մինչեւ ցարդ ամեն տարի գործածուած կերպն է. այս տարի բացառութիւնը հանգանակուած գումարին սովորականին անհամեմատ բարձր լինելն է միայն, որուն համար փափաքելի էր որ «Երբայն» աւելի ոգրախանար քան թէ քննադատէր: 1894էն ի վեր 200 Տոլարէն աւելի հաւաքուած չէր Ձատիկի եւ Մենդեան աւթիւ, մինչդեռ այս տարի 588 Տոլար էր: Հրապարակաւ շնորհակալութիւնն իր յայտնենք նուիրատու ժողովրդեան, որ թէպէտ փոքրաթիւ, (Ամերիկացւոց համար լուր օր լինելը, շատ գործարանատէրերու հրաման չիտալը եւ ժամանակին անյարմարութիւնը սար պատճառներն էին) այլ ցուցուց թէ ջերմապէս և անկեղծապէս կը սիրէ իր եկեղեցին:

Ընթերցողները լաւ գիտնալու են թէ՛ այս տուողները ո՛չ հարուստ վաճառականներ են և ո՛չ ալ սեղանաւորներ, այլ պարզուկ և խեղճ գործաւորներ, որոնք հազիւ շաբաթը 6-7 տոլար կը վաստակին, և բազմանգամ ալ ընտանիք ունին Հայրենիքի մէջ: Պէտք է գիտնալ նաև որ ասոնք թէ՛ Մենդէն մի քանի օր առաջ և թէ՛ նոյն օրը ընդհ. հանգանակութեան մասնակցած էին: Մեծ շնորհակալութիւն ամենուն և անոնց որ գմեզ քաջալերեցին Ս. Եկեղեցւոյ այս անձուկ վիճակին մէջ: Ի գիմաց Հոգարթմ. Ս. Փ. Եկեղեցւոյ Հայոց Ուսիքը:

Ատենադպիր Ատենապետ Մ. Սրապեան Պ. Մ. Գուլուսեան

ՊԻՇԸՊ ՍԱԹԸՐԼԻ ԵՒ ՁԱՐԸ

Ուաշինկթընի Անկլիկան եկեղեցւոյ եպիսկոպոսն, Պիշըպ Սաթըրլի, որ վերջի կոտորածներէ ետքը ի նըպաստ Հայոց բազմաստորագիր հանրագրութիւն մը տարաւ Ձարին, յաւաքիկայ կիրակի օր, կէս օրէ վերջը, ժամը 2ին, 23րդ փողոցի եկեղեցւոյ մէջ պիտի խօսի Հայոց իւր ճամբորդութեան ու Ձարի հետ ունեցած տեսակցութեան մասին:

ՀԵՌԱԳՐԱԼՈՒՐ

ԵՐԿՐԱՇԱՐԹ Ի ՓՈՔՐ ՍՍԻԱՅ

Երկրաշարժի ցնցումներ կը շարունակուին Պալիբարի եւ շրջականերու մէջ. 4000 անձինք անտուն են. 3600 տուն, 30 մզկիթ եւ 15 խան վընասուած են. 120 մարդիկ մեռած և վիրաւորուած են:

Գ Ա Ղ Ա Գ Ա Կ Ա Ն

Գաղղիոյ մէջ էմիլ Զօլայի դատը աշխարհի ուշագրութիւնն գրաւուած է: Ընթերցողք գիտեն թէ անուանի մասնակցողը՝ Տրէյֆուդ-Լսթըրհայի խնդրոյն առթիւ բողոքագիր մը գրկած էր Ֆրանսայի Նախագահին՝ ամբաստանելով զինուորական ատենան՝ անարդարութիւն գործած ըլլալու յանցանքով: Այս ամբաստանութիւն ըրած ըլլալուն համար է որ Զօլա կը դատուի այժմ:

Կը կարծուի թէ Գրագէտը իրաւունք ունի իր ամբաստանութեանց մէջ, և թէ կամաւ անարդարութիւն մը գործուեր է՝ բուն յանցանքն ըստ իր կամար:

Չինական խնդիրը կը կարծուի որ քաղաքագէտներու ձեռքէն լրագիրներուն անցեր է այժմ: Ոչ ոք գիտէ թէ խնդիրն ի՞նչ վիճակի մէջ կը կենայ այժմ: Անգլիայ յետս նահանջած կը թուի իր բռնած դիրքէն: Ազատական լրագիրներն կառավարութեան ընթացքը քննադատել սկսած են Անգլիոյ մէջ:

Հասարակաց ուշագրութիւնն թէ եւ Յունաստանէն դէպի Դեղին ծովը դարձած է, բայց այսու հանգերն աննպաստ լուրեր կուգան Թէսալիայէն, ուր անիշխանութիւն կը տիրէ:

Ն Ա Ի Ա Յ Ի Ն Լ Ո Ւ Ր Ե Ր

Այսօր գալիք
ՍԹ. ԼՈՒԻՉ, — ՍԱՌԻՉԱՄԹԸՆԷՆ,
Վաղը գալիք
ՆՕՐՄԱՆՏԻ, — ՀԱՎԸՐԷՆ:



ՇԱՐԱԹԱԹԵՐԹ ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ԲԱՂԱԲԱԿԱՆ

Կը հրատարակուի մօտ Եւրոպայի օրերս

ՏԻԳՐԻՍ Հրատարակչական Ընկերութեան կողմանէ:

Յ. ՂՈՒՄՐԻԿԵԱՆ, ԳԱՆՁԱՊԵՏ.

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳԱՑ ՈՒ ԲԱՆԱՏԱՅԻ ՀԱՄԱՐ	ՕՏԱՐ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ	Տարեկան 10 Փրանք.
Տարեկան 1 50	Տարեկան 75	Բաժանորդագրին ԿԱՆՆԻԿ վճարելի է միշտ:
Վեցամսեայ 40		
Յնամսեայ		

Մտար կամ նամակ ուղղել հետեւեալ հասցէին՝
To the DICKRIS PUBLISHING CO., 628 Third Ave., New York City

Entered at the Post Office at New York as Second-Class Mail Matter.

Նիւ Եորք, ՇԱՐԱԹ, ՓԵՏՐՎԱՐ 12 1898.

ԴՐԱՄ ՊԱՀԵՆՈՒ ԺԱՄԱՆԱԿԸ ԶԷ

Ուրախ ենք տեսել թէ որբերու խնդիրն մեծ նշանակութիւն գտած է Հայ գաղթականութեան մէջ: Ժողովրդի սրտին ու հոգւոյն հետ խօսող այս կարևոր հարց, կրնանք ըսել թէ գէթ մասամբ պիտի կրնայ լուծուիլ Միացեալ Նահանգաց առատաձեռն գաղթականութեան ձեռքով: Յարմար ժամանակը չէ՞ որ մեր կրթական ընկերութիւններն ալ այս առթիւ շարժին իրենց մասն ու բաժինը ունենալու այս ընդհանուր գործին մէջ: Տասնի չափ կըրթական ընկերութիւններ ունինք՝ այս և այն գիւղի մէջ ազգային վարժարան կառուցանելու նպատակաւ կազմուած: Այս ընկերութիւններն 10,000 տղարի չափ պատրաստ դրամ ունին այժմ դրամատանց գանձերու մէջ բանտարկուած: Մեր Բէսարիկցի, Սոյուցի, Եղեգի, Բերրիցի և այլ ազգայիք ինչի և ո՞ր օրի կապան, երբ իրենց գիւղերու մէջ շատ մը որբեր բոկոտն կը շըլին անօգնական թէ՛ հացի և թէ՛ կրթութեան կարօտ:

Այս ընկերութեանց ոմանց սահմանադրութիւններն, կ'ըսուի թէ կը պարունակեն այնպիսի օրէնքներ, որք կրնան հակառակ նկատուիլ այս խնդրին համար դրամ վատնելու գաղափարին, բայց դիտել տալու է թէ ընկերութեան մը նպատակի ուղղուն հակառակ չեղող ձեռնարկ մը կրնայ օրէնքին այս կամ այն երկրորդական պահանջներու յարմարեցուիլ՝ առանց օրինազանգութիւն ընելու: «Հովիւը քարէն կաթ կրնայ արտադրել»: Այլ սակայն օրէնքը խաղաղութեան ժամանակի համար է. խաղաղութեան ատեն ոճի ճանջուածներն անգամ, կ'ուրի և վտանգի ատեն առաքելութիւններ կը նկատուին: Մեր երկրի մէջ մահու և կենաց կռիւ կայ: Օրէնքներն իրենց բառական նըշանակութեամբ հարկ չկայ քաջընելու. այդ սահմանադրութեանց տողերու միջեւ շարուած մեծ օրէնքներ կան՝ խըղձի և արդարութեան օրէնքը, որոց, այսօրինակ պարագաներու տակ կը հնազանդին ամենէ աւելի բժախնդիր օրէնքներն անգամ:

Մեր հայրենակիցք եթէ չի փութան այժմ, դուցէ ապագային իրենց բանալիք վարժարանաց համար աշակերտացու մը պիտի չկրնան գտնել՝ կրթելու համար: Այս պահուած դրամներով միթէ խաչքարեր պիտի զենն ասոնք Հայ որբերու գերեզմանին: Այս կրթական ընկերութիւններն ասկէ աւելի պատեհ ու յարմար առիթ չեն կրնար գտնել՝ իրենց նպատակին ծառայելով՝ կրկնակ օգուտներ յառաջ բերելու համար:

Թող այս ընկերութեանց պատրաստ դրամն դուրս գայ դրամատանց ցուրտ ու մութ խորշերէն՝ իրենց գիւղերու որբոց մտքին լոյս, ու անոնց ստամոքսին՝ հաց և սնունդ մատակարարելու համար:

Դրամ պահելու ժամանակը չէ:

ՌԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

Անցեալ Կիրակի առուր ընդհանուր ժողովը փայլուն ապացոյց մը տուաւ նորէն սա մեծ ճշմարտութեան թէ Հայ ժողովուրդը ի սրտէ կը փափաքի օգնել իր կարօտեալ անդամներուն, և գործ հայթայթել անոնց՝ որք անգործութենէ կը տառապին. սակայն բազմութիւնն մութ թողուց կարևոր կէտ մը. այդ է թէ ինչո՞ւ այդ հոծ բազմութեան մէջէն միայն 50ի չափ անձինք մասնակցեցան բացուած հանգանակութեան: Տալու տրամադրութիւն ունեցող շատեր, լուռ ու մուռն, լոկ հանդիսատես եղաւ այդ ազդօգուտ ձեռնարկին, որոյ մէջ ո՛չ կրօնական խնդիր կար, ո՛չ

կուսակցական, և ո՛չ ալ գաղափարի տարբերութիւններ: որովորդէլ դումարուած էր. ո՛չ այս յարանուանութեան և ո՛չ այն կուսակցութեան կամ եկեղեցւոյ անուան տակ, այլ ընդհանուր Հայութեան ու մարդասիրութեան գործին ներքեւ եկած էր կատարել այնպիսի պարտականութիւն մը, որոյ հակառակ գաղափար ունեցող մէկը, եթէ ոչ անկարելի, գէթ դժուարին է գտնել ամբողջ գաղթականութեան մէջ:

Սակայն տարակոյս չի վերցնել թէ գաղանի պատճառ մը կար, որ այսպիսի պարագաներու մէջ խօսելու սովորութիւն ունեցող շատ մը բերաններն գոցուած պահեց ամրապինդ: Ինչ որ ալ ըլլայ այդ պատճառն, ոչ ոք կրնայ արդարանալ, կարօտեանն ու աղքատը զըրկած ըլլալով իրենց արդար իրաւունքէն:

Բարեգործական Ընկերութեան պարտականութիւնն է, այս պարագաներու տակ, ընդհանուր ժողով մը կազմել, բացարձակ և բացառիկ տալու համար ամէն մութ կէտեր — եթէ կան երէք — որպէս զի վերցուին ամեն կարծեցեցալ թիւրիմացութիւնը ու գործն իր սկսած ոգևորութեամբ յառաջ երթայ:

Աղքատներն ալ տեսակ մը որբեր են այս համագալային քաղաքի մէջ:

ՀԱՅ ԳՈՐԾԱՒՈՐՆԵՐՈՒ ԿԵԱՆՔԷՆ

Թշուառ է Հայ պանդուխդը.
Շատ աւելի թշուառ է հիւանդ, Փիղիքապէս քայքայուած, դաւուրը երեսին Հայ պանդուխդը.

Վտարագիրը որ երկնքին տակ որ ըլլայ ապերջանկութեան տրիպարն է. Ամերիկայի պանդուխդ Հայը նժուհէներու ամենէն դժբաղդն է, որովհետեւ եւ նժուհէ և ևհիւանդ է. բարոյական ցաւերով սառապողը կը դառնայ ամենաարգահատելի էակը, երբ նա ընկնուած, ջախջախուած է Փիղիքական ահուկի ցաւերով. անդաման կերպով փտտած է այն կուրծքը որուն տակ հոգիի եւ մարմնի ցաւերը սրսկած են իրենց հիւժիչ միջոցները.

Ամերիկայի Հայ պանդուխդներու մէկ մասը գերեզմանի վիճերուն մէջ գահավիժելու սոսկալի վիճակին մօտ է. շատ շուտով կը հասնի գերեզմանին.

Մեր առողջ հայրենակիցներու մեծ մասը դարձած են վատառողջ, սիրադէմ, դաւաճար ու շըլուն դիակներ. ինչո՞ւ այս Փիղիքական անկումը — ասոր առաջին պատասխանը փնտռելու է Հայ անվարժ գործաւորներու օրական 10-12 ժամերով շարժարանքին մէջ: Ազատ առուտուրի, սարի եւ քարի գաւկին համար անտանելի է գործարաններու ապականած մթնոլորտը. անոր մէջ նա արդէն կորսնցուցած է իր երկաթի կազմութեան մէկ մասը. բայց այս սկսածայ պարագաներուն մասնուած դասակարգը կամաւ ինքզինքը մասնած է ուրիշ աւելի սոսկալի շարժարանքի մը:

Ամերիկայի Հայ գործաւորներու մէկ մասը գձուձ խընայախրութեան մը տեսչէն վարակուած, տարիներէ ի վեր զրկած է ինքզինքը առատ, սննդարար, մաքուր ուտելիքներէ, չապահանուած օդէ, առողջապահ հազուստ — կապուտէ: Գիտնալով հանդերձ Հայ գործաւորներու նիւթապէս խեղճ վարձատրութիւնը, սխալ չէ յայտարարել թէ, այս դասակարգը կարող էր և է աւելի առողջապահ կենք մ'անցունել, եթէ չպակէր իւր մէջ քիչ մը առողջ և հեռատես դատողութիւն: Գործաւոր դասակարգը — քիչ բացառութիւնով — ընդհանրապէս կը խնայէ իւր ստամոքսէն քնակարանէն, իւր մարմնէն, ու կը շարէ 100-200 տոլարներու շարք մը իրարու վրայ: Կենսական հացի եւ օդի եւ լաթի գիներէն զեղջուածներն օր մը, շաբաթ մը կը վճարէ քանի մը տեսակ ղեղերու, որոնք կենքի անհրաժեշտ պէտքերէն բերապատիկ աւելի թանկագին են միշտ: Կիսանորոգ Փիղիքականով մը միեւնոյն ընթացքը կսկսի Հայ գործաւորը, ու ամիսներ վերջ միեւնոյն կենքը, աւելի սկզբ Փիղիքականով, միեւնոյն միջոցն որ արդէն առողջութեան քանդումին հետ, նիւթական եւ բարոյական տապալումները կը միանան. ալ կատարեալ է ամեն բան:

Ինչպէս ազատիլ այս ահաւոր կեանքէն՝ այն օրէն պիտի սկսինք ազատիլ, երբ վերջնական կերպով որոշենք ճաշարաններու և տուներու, կերակուրներու տեսակի, որակին ու քանակին մէջ փոփոխութիւններ մտցնել, և այն օրէն որ որոշենք մեր կենքի պէտքերու մատակարարութեան մէջ մտցնել սնտեսական և առողջապահական փրկաւէտ օրէնքներ:

Չարաշար աշխատութեան միտցած Պուլիուրէ փիլաֆի խեղճ ու պատառ սնունդը կը քակեն ու կը քանդեն սամսոնական կազմութիւնները. մէկ սննեակի ապականած օդին 5-10 մարդերու շնչելը կը հիւժախտէ ամենազօրաւոր թոքերը:

Բանի մը տարի առաջ Հայ վաղամեռ գործաւորներու գերեզմանները փորուած չէին Ամերիկեան հողին ծոցը, հիմակ, դժբաղդաբար, մէկը միւսին տակ, քովէ քով, եղան քանինն'ր կը փորենք, ու գուցէ մօտ ապագային մէջ Հայ-գաղթականութեան գերեզմանատուն մ'ալ ունենանք այս երկրին մէջ, երբ մեր Մայր երկիրը գերեզմանատուն մըն է արդէն:

ՈՐԲԵՐՈՒ ՍԻՒՆԱԿԸ

Նիւ Պրիթըն, 7 Փետր.
Յոյժ ցնծութեամբ կուգամ ձեր ընթերցողաց հաղորդել տեղւոյս հայ գաղթականութեան մէկ գործը որ շատ գովելի է:

Սմոյս Յին տեղւոյս հայ գաղութը ի նպաստ Հայաստանի որբերին մի ժողով ունեցաւ: Ըստ ժողովոյ բաղձանաց Պատ. Սամուէլ Հեղինէեան բնի հրաւիրուեցաւ բանաստեղծ: Պատուելին ժողովը բաց արեց Հայր մերով մը, և նպատակի պատշաճ ատենաստեց յոյժ սրտամտիկ ոճով, (թէ և տաճկերէն լեզուաւ) որով ունկնդրագ սրտերն խանդավառեցան, ու նոյն պահուն որոշեցին՝ առանց կրօնական խտրութեան՝ կազմակերպել անմիջապէս:

Կազմակերպութիւնը եղաւ այն հիման վրայ որով մի քանի անձնաւորութիւններ, Օր. Արի Պէլքուէլի նախաձեռնութեամբ, կազմուեցան մի քանի շաբաթներ առաջ:

Ուստի և մենք հետեւելով նոցա օրինակին կազմեցինք երկու եօթներ, և երրորդ մալ կազմուելու վրայ է: Իւրաքանչիւր խմբի մէջ մի անդամ պարտաւորուեցաւ վճարել որոշեալ տուրք մը: Չի մոռնամ գրելու որ անդամներն շաբաթավճար 7 սէնթերու հետ մէկ մէկ կրկիկ գումար նուէր մալ տուին:

Կը մնայ մեզ սպասել իմբագրութեանը հրահանգին թէ գումարը որչափի հասնելու է որ յիշեք Պատրիարքարան: ՕժԱՆԴԱԿ

Ձեր հասցէն յանձնած ենք Արթ. Տ. Մաշթոց վարդապետին որ բանակցի այս մասին ձեր նորակազմ եօթներակներու հետ:

Խմբ. ՏԻԳՐԻՍԻ

— Կ. Պոլսոյ Ս. Պատրիարքէն կըրկին և կրկին նամակներ եկած են Տ. Մաշթոց վարդապետին, որբերու տընակն ու կարօտ վիճակը նկարագրող: Այս նամակները կը հաղորդեն թէ ազգային հովանաւորութեան տակ որբանոցներ բացուած են, և որոց գոյութիւնն պահելու համար, արտասահմանի Հայոց օգնութեան կապուտի:

— Հօլեօքի մէջ Պարոնայք Ս. Յ. Սիմասրեան, Գ. Բակոբեան, Յովհ. Գարէկէօզեան, Կարապետ Գարէկէօզեան, Ս. Գալճեան, Տուրնայեան և Ռուբէն Սէյթարեան՝ եօթներակ մը կազմած են:

— Բէմպրիճի մէջ Հայասէր Տիկին Ս. Գ. Լուիսի գանձապետութեամբ, Պրք. Գաւիթ Սիմոնեան, Յ. Տէր Օհանեան, Չ. Յոբէլեան, Պ. Յարութիւնեան, Ա. Ահարոնեան և Յար. Տիրանեան ուրիշ եօթներակ մը կազմած են:

— Արթ. Տ. Մաշթոց վարդապետ մի այլ իւզաներկ նուէր ստացած է, ի նպաստ որբերուն վաճառուելու համար: Նուիրատուն է ազգային մը որ չուզէր անուրը հրատարակութեան տալ:

— Փրովիտէնսի մէջ նոր ընկերութիւն մը կազմուած է ի նպաստ որբերուն հանգանակութիւն մը բանալու նպատակաւ: Տ. Վաղինակ վարդապետ նախագահն է այս ընկերութեան:

Փետր. 7, Թրոյ.

Տէր խմբագիր.
Թրոյէն Ձեր թերթի երկուող մի գրող Պ. Տօնիկ կերակայ թէ անգագատ վիճակի մէջ կը գտնուի, զի ճիշդ այս անցեալ կիրակի ժողով մ'ունեցանք, յորում որոշեցինք Թրոյի գաղութի խնայած ստակէն գոյացած 75 տարն տեղւոյս բարեխիբաց ընկերու-

Թեան զրկուի առ Ազգ. Պատրիարքարան, որքերն հոգալու համար, որուն ամեն անգամ մասնակցած է:

Ասանկ ինքնակազմի մը այսպէս գըրելն անտեղի և անխորհուրդ են: ՀԱՄԱՐԱՐՁՈՒՄ Մ. ՇԱՀԻՆՆԱՆ.

Փետրվ. 10, Փրովիտէնս. Խմբագիր Տէր Միւթեան Անդամական ժողովը տեղի ունեցաւ Փետրվ. 6ին, եւ սոյն ժողովին մէջ որոշուեցաւ իւր ունեցած դրամին հարիւրին տասնեւհինգը Խորհրդու որբանոցին խրկել:

Մասնաբ. ի գիտաց Խորհրդի կեդ. Վարժ. նպաստող Փրով. Միւթեան Գործ. ժողովը:

Ատենապետ. Ատենապետ. Պ.Յ. Ա.ՆՈՒՃԵԱՆ Ս.Ա. ՍԱՄՈՒՐ

Նիւ Եօրք Փետրվ. 9.

Ի սրտէ շնորհակալիք և օրհնութիւն վերջին ֆրովիտէնսի ընկերութեան իւր այս մարդասիրական ձեռնարկին համար:

Հրահր կը կարգամ միւս ընկերութեանց եւս որ հետեւին այս օրինակին: ՎԱՂԻՆԱԿ ՎԱՌԳԱՊԵՏ

Մ Ա Ն Ի Ր Ա Ն Ո Ւ Ի Ր Ք

Նէշուէի դերասանական խմբի անդամներէն Պ. Պորդաբեան Յունվ. 30ի կիրակի օրն, կէսօրէ վերջ, Պոսթընի լսարանին մէջ խօսեցաւ թատերական ներկայացում մը ստալու խնդրոյն վրայ ի Մօլտըն: Նոյն երեկոյ Մօլտըն այցելելով հոն ևս յուզեց այդ խնդիր, տեղւոյն լսարանին մէջ:

Մեզ կը գրեն թէ Տ.Ս. Պէսոյեան անցեալ շաբթու ֆաթըրընք գնացած է հոն կրօնական ժողովներ հաստատելու նպատակաւ:

Անցեալ ամիս ֆաթըրընքի մէջ ամուսնացած են Տիարք Մկրտիչեան և Տարտիկեան. առաջինն Հայուհու մը հետ, իսկ վերջինն՝ Ամերիկուհիի մը հետ:

Մեր Փրովիտէնսի թղթակիցը Յունվ. 31 թուով կը գրէ. «անցեալ կիրակի Տ. Վաղինակ Վարդապետ, Ս. Պատարագ մատոյց ու որբերուն համար լաւ քարոզ մը խօսեցաւ, ու հանգանակութիւն մը բանալով, 117 տարւոր գոյացուց 150ի չափ բազմութեան մը: Տասն և հինգ օր վերջ, Նորին Արժ. ընդհ. հանգանակութիւն պիտի բանայ նոյն նպատակին համար:

Ընթերցողը կը յիշեն անշուշտ թէ անցեալ տարուայ վերջերս, Դեկ. 25ին, Փրովիտէնսի Հայ Բողոքական ազգայինք ընտրութիւն մը կատարած էին նոր քարոզչի մը համար: Այդ ընտրութիւն որ կատարուած էր կուրիներու մէջ, ապօրինի նկատուելով՝ ժողովրդէն ոմանք սկսած էին վերջերս բողոքայ ձայներ բարձրացնել նորընտիր պատուելիին դէմ: Մեր թղթակիցն Պ. Բուսովա՛ կը գրէ թէ անցեալներն նոր ընտրութիւն մը կատարուած է ամենայն օրինակորութեամբ՝ ժողովականաց կեկեղեցոյն մատան մէջ, ուր Պատ. Սարգիսեան եան ստացած է 25 քուէ, և Պ. Տէր Գասպարեան՝ 3 քուէ: Բայց այս օրինակոր քուէարկութիւնն ալ իրայ վիճակը չէ կրցած փոխել. այս անգամ հակառակ կուսակցութիւնն սկսած է բողոքել ու նոր ընտրութիւն մը պահանջել՝ առարկելով թէ բոլոր քուէատուք ներկայ չեն գտնուած ընտրութեան օրն: Հոմ Միշինը լսելով այս անխորժ դէպքերն ու վիճարանութիւններն՝ լուր տուած է Հայոց թէ այսուհետև չի կրնար Տատուուն իրենց արամադրութեան տակ դնել:

Յաւ իսիրտ կը տեղեկանանք թէ Տիկին Ալթունեան՝ մայր Տիկին Ալթունի, իւր մահկանացուն կնքեր է վերջերս, յիշմիր:

Անցեալ Ուրբաթ երեկոյ Արժ. Տ. Վահրամ ք. և Հ. Էկինեան, ձըրզիի Հոգաբարձութեան կողմէ Սըմիթ գնացին, ուր հանգանակեցին տեղւոյն

Հայերէն 32 տար ինպաստ եկեղեցոյ շինութեան: Արժ. Վահրամ Բ. հետեւալ օրն տեղւոյն Հայոց գործարանատիրոջ Տ. Տէֆարէսի այցելութեան գնաց շնորհակալ ըլլալու այն մասնուոր հոգածութեան համար որ օտարազգի գործարանատէրն ունի եղեր իւր Հայ գործարանայ վրայ: Տ. Տէֆարէսի լսելով իր այցելուաց Սըմիթ գալու պատճառն՝ փափաք յայտնեց ինք ևս ինքնակամ օժանդակութիւն մ'ընել եկեղեցոյ շինութեան գործին, և այս առթիւ 50 նուիրատուս առաւ:

Անցեալ Շաբաթ երեկոյ ձըրզիի նոյն պատգամաւորներն ըստէն լին ևս այցելեցին նոյն պաշտօնով, ուր Հայերէ հանգանակեցաւ 80 տուարի չափ: Տեղւոյն գործարանին տեսուչն, Տ. Բիկ ևս մասնակցեցաւ այս հանգանակութեան, իր կողմէ 5 տուար տալով: Տ. Վահրամ Բ. ըստեւ լինի մի քանի ազգայնոց նոր գնած տուներն օրհնեց ու միկատութիւն մը ըրաւ:

Խըթըլալը գիւղի նախկին քարոզիչներէն Պատ. Ապօշի երկու զաւակներն Յակար և Բէրիմ անցեալ օր Պարճ օֆիսէ ետ զրկուեցան: Գանի մը ազգայինք ջանքեր կ'ընեն զայնս նորէն բերել տալու համար:

Նորակազմ Հնչակեան Մասնաճիւղը անցեալ շաբաթ գիւղեր 23րդ փողոցի եկեղեցիի մէջ, Հրապարակային ժողով մը ունեցաւ Վաղինակ Վարդ. նախագահութեամբ և ատենապետութեամբ Տ. Համբարձումեանի: ժողովին մէջ խօսեցան Տիարք Ձիթճեան և Վ. Գրիգորեան, առջի ատենախօսը ի մէջ այլոց ըսաւ թէ և ոչ մէկ վտանգ այնքան սպառնալից է, ազգին համար, որչափ յուսահատութիւնը որոյ մէջ դժբաղդարար թաղուած է Հայութիւնը:

Ընթերցողը գիտեն թէ Գաղաքիս 21րդ փողոցի ճաշարանին մէջ կուր մը եղած՝ ու Մամուլ անուն երիտասարդն ձերբակալուած էր երկու շաբաթի ճեփ առաջ: Այս անձի դատն տեսուչեաց անցեալ օր, և որովհետև ճաշարանատէսն հրաժարած էր պընդել իր ամբաստանութեան վրայ՝ դատարանն ազատ արձակեց ամբաստանեալ երիտասարդը:

Ուսթըրի Տիկինաց Գրադարանի Օժանդակ Ընկերութեան առաջին հանդէսը տեղի կուենայ այս երեկոյ Ս. Փրկիչ Եկեղեցոյ սրահին մէջ:

Կիւլպէնեան տունը ճիւղ մը պիտի հաստատէ Պոսթոնի մէջ, ուր, կը լսենք թէ վերջերս տիղի ունեցող առևտրական դժուարութեան մը պատճառաւ 15 հազար տոյար կորսնցուցած է:

Տըթ. Գ. Սիւնի, որուն բնակարանի փոփոխութեան լուրը տուած ժամանակ սխալ մը գործած էինք թուի մասին, իւր օֆիսիս ունի ի թիւ 170 Լէքսինգթըն Ալթիւ, 30րդ փողոցի մօտ:

Անցեալ երեկոյ հին և նոր Հոգաբարձութիւններն ու Բարեգործական ընկերութեան դիւանն խառն ժողով մ'ունեցան Վաղինակ Վարդապետի սենեակը, ինչ ինչ խնդիրներ լուծելու համար: Սենեակի անձկութիւնն ու տան տիկնոջ անտեղի գիտողութիւններն ստիպեց ժողովականներն նիստին մէկ մասը Տըթ. Տատրեանի տան մէջ շարունակելու:

Համարառու Յանձնախումբն նիստ ունեցաւ այս քաթիւն ու իր դիւանն ընարեց: Տ. Գամպէր՝ Ատենապետ, և Էկինեան՝ Ատենապետ անուանուեցան:

Բարեկամը—Գալ շաբաթ պիտի ամուսնանամ:

Ինչ կըրես, ինչ չուտ աղջիկ գտար:

Կենսագրութիւնն Հայերն ղըրկեցի:

Աման կաղաքիմ, հատ մ'ալ ինձ համար պատրաստէ: ՍՈՒԻՆ

«ՀԱՅԻ»-Ի ՊԱՏԱՍԽԱՆԸ

(Շարունակութիւն և վերջ)

Հայքի ձախողութեան պատճառը իր չափազանց անհատականութիւնն է. Հայքը եղած է իր խմբագրին կամ այցաբարը կամ յուշատետրը. ժողովուրդը, հասարակութիւնը այն տեղ գործ ունեցած չեն. հանրային խնդրոց վրայ խօսուած է ոչ այնքան այդ խնդիրներով ժողովուրդը հետաքրքրելու՝ որքան անոնց վրայ խմբագրին հատուկութիւնը ցոյց տալու: Թերթին մէջ միշտ մեծ տեղ բռնած են ինքնագով խմբագրականներ եւ համակրական նամակներ լի չափազանց գովեստներով, այս վերջնոց ոմանց ալ հեղինակը՝ շատերու կարծիքով, նոյն համեստ գրագէտը լինելու պայմանով: Յուշատետրի բաժնին մէջ է այն հանդէսներու նկարագրութիւնը, ուր Հայքի խմբագիրը խօսած է: Այդ նկարագրութիւնները երբեմն շատ զուարթալի են. օրինակ, Հայքի խմբագրին խօսած ատեն լուսինը կը խաւարի. ուրիշ տեղ՝ մեր Հայ Յետուն պահուելուք կը խաղայ Ուսթըրցի Հայոց հետ, յանկարծ աներեւութանալով ու յետոյ եկեղեցին երևան գալով:

Անյաջողութեան վերջին և գըլխաւոր պատճառն է թերթին փոփոխամտութիւնը, «Հայքը իր ընթերցողներու թւոյն երեք անգամ սկզբունք փոխած է» գիտել տուաւ բարեկամ մը, այս իրողութիւնը ծանօթ է ամենուն Ամերիկայի մէջ. օր մը Հնչակեան, օր մը Դաշակեցական, օր մը Հայկազեան, օր մը և ոչ մին, օր մը ամենը միասին, այս է Հայքի ուղղութիւնը: Վասն իմ թէ՛ ըրժիկ-խմբագիրը ամենէն շատ սկզբունք հազած ու հանած ըլլալու մըրցանակը պիտի շահէր: Այս գրութեամբ հրատարակուած թերթ մը չկրնար յաջողիլ:

Նիւ Եօրքէն Հայքի բարեկամ եղող մարդիկ թերթը տարածելու համար 30 օրինակի չափ կը զրկէին ինձ. հաւատացէ՛ք որ որուն որ կուտայի չէին ուզեր, առաջին անգամն էր որ ձեր թերթ անգամ կարդալու դժկամակութիւնը կը տեսնէի Հայոց մէջ. այդ մարդոց մէջ կային գործաւորներ, ուսուցիչ մարդիկ, ամեն կուսակցութեան վերաբերեալ արհեստաւորներ, և ո՛չ մին կուզէր կարդալ. և զիրենք չէի մեղադրէր, կը մեղադրէի Նիւ Եօրքի բարեկամներս և մ'անսանդ թերթին խմբագիրը, որ եթէ ուզէր կրնար շատ տարբեր պարունակութեամբ հանդէս մը հըրատարակել, հանդէս մը որ իրականապէս բարձրացնէր, ոչ նուաստացնէր Ամերիկայի Հայ գաղթականութիւնը, կրթէր անոր գրական ճաշակը, մտքին ու գաղափարներուն առջև նոր հորիզոններ բանար, ծանօթացնէր զայն նոր աշխարհի մեծ մասնագիրներու հետ, հասարակապետութեան սկզբունքը ըմբռնել տալ բընութեան փախչող տարագիր ժողովուրդի մը, սակայն այս ամենը ինչպէս սպասել ինքզինք գովելով ըզբազուած խմբագրէ մը: Պոսթոն, 28 Յուն. 98 ԱՐՄԷՆ

ՑՈՒՑԱԿ ՆՈՒԻՐԱՏՈՒՑ ԻՆՊԱՍՏ ՇԻՆՈՒԹԵԱՆ ՀԱՅ. ԵԿԵՂ. Ի ՈՒԵՍԹ ՀՈՊՈՔՆ

Առջի գումարը	§ 173,00
Չուլճեան Երբարք	25,00
Տիկին և Տիար Պատմաճեան	20,00
Տիկին և Տիար Ծօն Պատմաճեան	10,00
Տիկին և Տիար Կ. Տիկնճեան	10,00
Յակոբ Այվազեան	10,00
Յակոբ Քէշիշեան	10,00
Յովհ. Հէքիմեան	10,00
Յակոբ Դումբիկեան	10,00
Գէորգ Խնձորեան	10,00
Թ. Ռսկերճեան	10,00
(Շարունակելի)	Գումար 298,00

ԲԱՆԱՍՏԵՂՄԱԿԱՆ ՄՐՑՈՒՄ

Բ.

ԻՄ ՍԻՐԱՄՍ

Ես կը սիրեմ այն կեանքը Ուր տեղ չկայ արտասուք. Որտեղ ժանգոտած չլիթայն Ոտից, ձեռաց չեն կապան Ա՛հ, կր սիրեմ այն կեանքը Որ տեղ Սէքն է հաւատքը. Ու բռնութիւն տմարդի Հին առասպել մ'է հոնի:

Ես հոգւոյս չափ կը սիրեմ՝ Կրթիչ գաղափար վսեմ, Որ թարգմանն է բարութեան Բարոյական մարդկութեան:

Օ՛հ կը պաշտեմ այն կեանքը Ուր բոլորինն են հաւասար, Դասակարգի օրէնքներ, Սիրոյ վրայ հիմնուէր: ԱՏՈՄ

ՍԱՌԱՄ ԼԻՃ

Ինչո՞ւ սառեր է քու դէմքը, Եւ անզգայ ես լճակ. Մարդիկ վրաք խնուեր են, Սա՛հին ազատ համարձակ:

Ինչո՞ւ երբեմն ո՛վ գոռ լճակ, Որ զեփուռէն խայտայիր. Բամիներու հետ, վրդովուած, Անդադար մարտ մղէիր:

Բայց անողոք բնութիւնը, Սառնաշունչ քամիին տակ, Ափերուդ հետ մարտնչելով, Սառեցուց քեզ անգիտակ:

Եւ դու գուցէ վահան ըրիր, Այդ կարծր սառ դիմացուռ. Որ քու քունը չվրդովին, Ձիւն ու հեղուկ, մինչ գարուն:

Դէ՛հ, ուրեմն դու մի հոգար, Շուտ գան գարուն ու ամառ. Անկեղծ սրտէդ բղխած շնով, Անհետ հալի սառն իսպառ:

Բայց յիշէ որ իմ հէգ սիրտը, Սառած անոյս անհոգի, Եւ այս երկար ձմեռուայ տակ, Գուցէ իսպառ ցամաքի: Նէշուէ. ՋՈՋԻԿ

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ ՏԻԳՐԻՍԻ

Փաթըրըն, Փետր. 3.

Գաղաքիս Հայ գաղթականութիւնը այլ Հայարնակ քաղաքաց նման զարգանալու վրայ է որոյ թիւն է այժմ առուել քան 100. այս թւոյ ոչ նուազ քան կէսն իդական սեռի կը վերաբերի: Քիչ բացառութեամբ ամեն Հայ մետաքսագործ լինելով, այս տարի ոչ ոք անգործ կը գտնուի, որոնցմէ ոմանք անցելոյն մէջ յաջողակ լինելով տան և հողի տէր լինելու բազմաթիւն արժանացած են: Գաղաքիս մըլտաբնակ Հայոց մէջ արատ կամ անպատուարեր դէպքեր խիստ քիչ պատահած են, և ընդհակառակն իրենց բարեկեցիկ և ընկերային ընթացքով, մի լաւ տպաւորութիւն թողած են տեղացւոյն վրայ:

Գաղաքիս Հայերն, աւելորդ չենք համարել յիշել սաղ թէ ջերմապէս ազգասէր են: Բարենպաստակ ձեռնարկութեանց և հրատարակութեանց օգնելու միտումն շարունակ կը կրեն իրենց մէջ: Հայ գաղթականաց միութիւնն որ այժմ մի նոր կազմակերպութիւն ստանալու վերայ է, իւր անցելոյն մէջ կատարեալ օրինակ եղած է իւր ազգօգուտ նուէրներով և գործունէութեամբ:

Հինգ Հայ երիտասարդներ, որք 1-3 տարիներէ իվեր կը ծառայեն «Նաշընէլ Կարտ»ի մէջ, կարևոր պաշտօններ կը կատարեն յաջողակութեամբ և յարգանաց կ'արժանանան իրենց անդամակից բարեկամներէ: Անցեալ ամառ մրցանակ առնողներու կարգին մէջ էին Տրք Կ. Չանգալեան, Պ. Չանգալեան, Ս. Թագազճեան, և Տ. Մ. Պէշկէօթրեան, որք ընդունեցին իրենց շքանշաններն հանդիտապէս անցեալ ամիս: Տիար Կ. Չանգալեան կը կրէ իւր կուրծքին վերայ մի նշանաճի (շարիւղութիւն) նշան ևս: Տ. Կ. Պ.

ԵԿԵՂԵՑԻ ԹԷ ԳՐԱԴԱՐԱՆ

Տէր Խմբագիր

Ներկայիս Հայ գաղթականութեան վատ դրութիւնը աչքի առաջ ունենալով, ձերգրի Հոգաբարձութեան անցուցած որոշումն այնքան հետմնաց գաղափար է, որ ամեն ընթերցողի ծիծաղն շարժած լինելու է: Թէ ի՞նչու, ապացուցանեմք միայն մի քանի փաստերով:

Ա. Հայ գաղթականութեան մեծամասնութիւնն աղքատ, և գործաւոր գասակարգէ բաղկացած լինելով՝ աւելի կարօտ է դարգացման, ուսման, քան թէ ուրիշ կրօնական խնդիրներով զբաղելու ինչ որ հարկաւորուոր տարիներով ըրած է:

Բ. Հայ գաղթականութիւնն զարգացման հասցնելու միմիայն միջոցն յատուկ և ընդարձակ ժողովրդական գործարան մը ունենալն է. յորում փոխան Հայ երեսասարդներն ճաշարաններու ապականուած օդին, իրենց սուղ ժամերը ունայն խաղերով անցկացնելու, կ'զնան ընթերցանութեամբ զբաղելու. միւս կողմանէ վստահ ըլլալու ենք որ եթէ քան հաս ալ եկեղեցի կառուցուի՝ կրկին չեն երկրթար. ապացոյց Նիւ Եօրքը:

Գ. Արդեօք ձերգրի Հոգաբարձութիւնը Ուսգրի եկեղեցին աչքի առաջ բերած է երբէք, որ այսօր 6-7 տարիներէ իվեր կառուցուած է, ու դեռ պարտքի տակ կը մնայ. անկից դատ, Ուսթըրի եկեղեցին՝ փոխանակ տեղական գաղթականութեան օգուտ մը հասցնելու, ցաւալի է ըսել որ ահագին երկպառակութեանց, կռիւնների, արիւնայեղութեանց կեղերուն է եղած:

Դ. Ձերգրի Հոգաբարձութիւնն գոնէ սա չափը պէտք է գիտցած լինէր մինչ այժմ, թէ մարդիկ կրօնի ճշմարտութիւնը կրնան ըմբռնել այն ատեն, երբ իրենք քիչ թէ շատ ուսեալ են, երբ այլևս կարող կ'ըլլան հասկնալ Քրիստոսի քարոզած դաղափարները. անզարգացած, սղէտ մարդիկ Քրիստոսի կամ Աստուծոյ կը հաստատան այնպէս ինչպէս Ձինաստանցիք կը հաստատան իրենց շատուածներին:

Գիտեմ թէ և վերև յիշուած մի քանի դիտողութիւններս «ՏԻԳՐԻՍ» ընթերցողներէն ոմանց զարմանք պատճառէ, բայց պէտք է քաջ գիտցած լինին որ իմ նպատակն չէ բնաւ աստ կրօնի կամ եկեղեցւոյ հակառակ խօսիլ, այլ հասկացունել Հայ գաղթականութեան, և միանգամայն խորհուրդ տալ ձերգրի Հոգաբարձութեան թէ՛ այն դրամը որ պիտի գործածեն Մատուռի շինութեան, գրատարան մը կապեն, լիքի գրքերով և լրագրիներով:

Պարոնայք, լաւ կը լինի որ ձեռքերնիդ Ձեր սրտին սեղմէք և խղճի մտօք խորհէք Ձեր յղացած որոշմանց վրայ: Անդին Հայաստանը թշուառ է, հազարաւորներ մերկ, անօթի, փողոցներն կը մնան. հարիւրաւոր որբեր օտարների ձեռքն են ինկած և քիչ վերջն Ազգութենէ կը հեռանան: Հոս Նիւ Եօրքի և շրջակայքերը Հայեր կան, որ օրերով անօթի կը մնան, ու գիշերներն անցկացնելու սեղ չունին, և իրենց պարագայ ժամերն՝ նարտով կամ թղթախաղով կ'անցունեն. այս ամենը գիտնալով, ձեզնէ զատ մի Հայ ալ պիտի գտնուի որ յանդգնի եկեղեցի շինելու հաւանութիւն տալ: Եթէ Հայ կրօնը կամ Հայկական եկեղեցին պահելու գէշ, դա կը լինի միայն ժողովրդի զարգացմամբ. և ժողովուրդը կը զարգանայ այն ատեն երբ նրա առջև կը բանաս զարգանալու, ուսման միջոցներ:

ՇԱՆԹ Յունվ. 18, Նիւ Եօրք.

ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՏՈՐԱՄԱՆԵՐՈՒ

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՈՒԹԻՒՆԸ

(Շարունակութիւն և վերջ)

Յեղափոխական շարժումներն ըստիպեցին զԵրուսալ լսել մեր արդար բողոքն: Դիւանագիտական մարմինն ի Կ. Պօլիս ձեռքն առաւ Հայկական խնդիրն, որն մենք իրենց յանձնած էինք սա բառերովն. «Կենաց, պատուի և ընչից ապահովութիւն կ'ուզուի»: Նոքա փոխեցին մեր պահանջն սապէս, «այն նահանգաց մէջ՝ ուր Հայք բազմաթիւ են քան զՕսմանցիս, հոն Հայ կուսակալ(վալի) դըրուի»: Բնական էր Սուլթանի համար և դիւրին Հայոց թիւն նուազեցունել. այդպէս ալ ըրաւ կանխաւ գծելով յատակագիծն: Արդ որոշէ թէ Չարդերու անմիջական պատասխանատուն Երուսալն է մեր պահանջն հեղաշրջած լինելուն համար, իսկ Սուլթանն եղեռնագործն է: Սակայն ճիշդ է թէ եթէ Հայք լռէին, որպէս լռած էին չորս հարիւր տարի, տանէին այն լուծըն, որ անասուններն ևս չէին տանիր, կոտորածներ տեղի պիտի ունենային ոչ թէ կառավարական կարգադրութեամբ, այլ այն հին ձեռքովն որ տեղի ունեցան մեր նախահարց օրով:

* * *

Գրչի պատերազմն վարող այդ ճարտար փաստարաններն՝ յանդէպ այս իրողութեանց կը պնդեն թէ, Հայկական կոտորածներն արդիւնք են այս կամ այն թերթի գրութեանց. սակայն ցարդ յիշած չեն թէ ի՞նչ հիման վրայ հենած այդպէս կը խորհին և կասեն: Եթէ այդպէս կասեն, վանն զի Չարդերն յաղորդեցին գրութեանց, այդ շատ ծիծաղելի է:

Արդեօք մեր Պարոններն գիտե՞ն թէ Որմեան Հայրիկները գրեց իւր «Հայ Գուժն». մի գուցէ Հայկական կոտորածներն նորա արդիւնքն են: Ձէ կարելի արդեօք մտածել թէ, վանդուժն վանի շուկայի այրուելէն առաջ գրուած է և պատճառն է այն մեծ հրդեհին:

Եթէ լսենք գրչով յեղափոխականներուն պէտք է զարմանանք որ կոտորածը չհետևեցաւ նախանշաններին, Գամառ Գաթիպայի, Նար-Պէյի, Պէշիկիթաչլեանի և այլ բազմաց հոգեւորնչ տաղերուն: Պէտք է հրաշք համարինք որ Հայ ազգն Ռաֆֆիի գրութիւններէն վերջ ևս կ'ապրի: Պէտք է այրենք այն ամեն հին ու նոր գրութիւններ, որոնց մէջ Օսմանեան երկրին կամ կայսրութեան դէմ ակնարկութիւններ կան: Պէտք է կոտորենք յեղափոխութեան Ս. սուրբն և ծուռկի գանք Թրքաց Փատիշահի առջևն:

Իսկ ի՞նչ են քո զգացումներն, ո՞վ տառապեալ Հայ ժողովուրդը:


Գիտեմ դու անտանելի վիճակ ունիս, սակայն անբաղդատելի վեհանձն ես: Դու ծուռը չես կրկներ Համիտի առջև: Գո սուրբ սուրն միշտ պիտի շողայ: Արեւմտը ներկեալ դրօշակն պիտի ծածանի: Դու կ'անաս միայն այն ձայնին որ քո նահատակներու գերեզմաններէն դուրս կուգայ—Օ՞ն, յառաջ:

Պօստոն Ա. Ս. ԼԵՒՈՆԵԱՆ

Ա.Չ.

Գարբէլ Հապէշեան, Սերասիացի՝ որ երբեմն Պոսթոնի և Միտլպօրճի կողմերն կ'օգնակարի քով կ'աշխատի տղոր. կը փնտռուի իր հօրեղբոր որդւայ կողմանէ:

Գրել ՏԻԳՐԻՍԻ Խմբագրութեան:




ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԳԻՏԱՐԱՆ

Գերբող Տպագրութիւն
Մաքսուէլ Սըմբըրլիւ
Հրատարակիչ
Կը բաղկանայ 25 մեծագիր Հատորներէ, որք կը վաճառուին բաժանորդագրութեամբ միայն:
Սոցա գինն է,
Կտաւեայ կազմ 62 տող. 50 սէնթ
Կէս կաշիակազմ 87 " 50 "
Փառակազմ 100 "

Առաջին տեսակէն կը զրկուի անոնց որք յանձն կառնեն վճարել ամիսը 2 տողար 50 սէնթ: Երկրորդին ամսավճարն է 3 ու կէս տողար, իսկ վերջինին՝ 4 տողար:
Այս Համագիրտարանն Ամերիկեան միակ արտօնեալ տպագրութիւնն է. մնացեալը անկատար են ամեն կերպով: Մանրամասնութեանց համար դիմել խմբագրութեանս:

ՃՈՒԼԻԸՍ ՇՈՒԱԲ
ԺԱՄԱԳՈՐԾ



1220 Յրդ Աֆիւ, Նիւ Եօրք

Հ Ի Ր Զ Օ Լ Ա
ՄԱՋԻ ԴԵՂ



Կը զօրացնէ, կը մաքրէ, կը փայլեցունէ մազերը ու թափելը կը դադարեցնէ: Կը բուժէ նաև մորթի հիւանդութիւնն ու կը մաքրէ թեփերը:
Միանգամօրոք ձեւ բաւական է սաղեղին արժէքը դիտնալու համար, յր արևելեան խոտն զէ պատրաստուած է յոյժ հաճելի մի կոտորով:
Կը ծախուի բոլոր դեղագործներուն քով:
Գին 50 Սէնթ միայն:
Կարելի է ստանալ նաև Հայկական դեղարանէն — ի թիւ 472 Յրդ Աֆիւ, Նիւ Եօրք:

ՆՈՐ ԱԶԳԱՅԻՆ ԵՐԳԱՐԱՆ
ԵՒՐՈՊԱԿԱՆ ՆՕԹԱՅՈՎ

Հինգ վեց տարիներէ իվեր Ամերիկայի և Արտասահմանի Հայեր մեծ եռանդով սկսած են հետամտիլ Հայկական երգերու և երաժշտութեան, խնդրած են մեզմէ Ազգային Երգեր ձայնագրել և զրկել իրենց հասցէին որ յեգիպոսս, Կիպրոս, Մարտիլ, և կամ Ամերիկայի այլ քաղաքները... մէն մի եղանակի 25-50 սէնթ վճարելով (ըստ երկայնութեան եղանակի):

Յոյժ զգալի տեսնելով ուրեմն այս պէտքն ու պակասն, և շատ մը բարեկամներու խնդրքն չմերժելով՝ կուգամք այս առթիւ ծանուցանել Հայ մարմնոյն որ յիմերիկա և այլուր թէ մի ամիսով ազգային երգարան՝ նօթաներով հանդերձ պիտի պատրաստենք տարուս մի քանի ամսոց մէջ, յորում պիտի գտնուին 80ի չափ հին ու նոր ընտիր երգեր, ձայնագրեալ մէկ և աւելի եղանակներով:

Ամեն անոնք որ այժմէն կը յեղեն իրենց բաժանորդագրին, մէկ տողար միայն պիտի վճարեն և ստանան ընկալագիր:
Երգարանը լոյս տեսնէն վերջ, գրինք պիտի ըլլայ \$ 1.50:

Յ. Սարկաւազեան,
289 Տին Սթրիթ,
Փրովիտէնս, Բ. Ա.

Ե Ղ Ֆ Ա Ր Գ Ա Ք Ր Ա Հ Ա Մ Ե Ա Ն
Թիւ 24 Պէք Սթրիթ,
Փրովիտէնս, Բ. Ա.

Փրովիտէնսի մէջ վերջերս հաստատած ենք Արևելեան Օղիթ, Մաթիթայի գործարան մը. մեծ խնամքով կը պատրաստենք յիշեալ ըմպելիները:

Կուգանք խնդրելու ամեն Հայէ, որ եթէ ըմպելի գործածել ուզեն, փոխանակ օտար և անխորժ ըմպելիներ գործածելու, դիմեն մեզ և ըստանան իրենց վարժուած գուտ շամիչէ մաքուր օղի, իւր տեսակներով: Նաև եթէ փափաքին իրր Արևելեան ըմպելի նուէր տալու բարեկամներու, ասոր համար պատրաստած ենք աղւոր ներմուծեալ փաթեթոցներով և կնիքներով փակուած շիշներ, խիստ պատուական տեսակէն. կրնաք այս շիշերէն գնել և պէտք եղած տեղերն զրկել:

Կը յայտարարենք նաև թէ Ուաշինկթօնէն մեզ տրուած է փաթէնթ, ուստի կ'զգուշացնենք ուրիշ ծախողները:
Գիներ. \$3.00 1 կալըն. 90 Փրու.Փ
\$4.00 " " 100 "

Ճ Ի Լ Ի Ը Ա Հ Ե Յ Ն
Վ Ա Ճ Ա Ռ Ա Կ Ա Ն

Միսխոտի, առաջնակարգ սիկարի և Սիկարէթներու
Թիւ 592 Յրդ Աֆիւ
Յիշեցէք ՏԻԳՐԻՍԸ Երբ գնէք

ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՇԱՐԱՆ

ՈՍԱՏՈՒՐ ԿԱՐՎԱՆԵԱՆ
388 Յրդ. Աֆիւ Նիւ Եօրք
Շահուել հարիւրին երեքը պիտի յատկանայ Հայաստանի Որբերուն:

Յ. Մ. ՂՈՒՄՐԻԿԵԱՆ,

Ա. Ռ. Ա. Ջ. Ա. Կ. Ա. Գ. Դ. Ե. Ր. Չ. Ա. Կ.
Թիւ 628 Յրդ Աֆիւ, Նիւ Եօրք:

ՏԵՂԱԿԱՆ ԵՒ ԵՒՐՈՊԱԿԱՆ

Ընտիր կերպասեղէններէ վայելուչ հազուատներ կը շինէ դիւրամատչելի գիներով: